ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ II Խումբ
Թեմա՝ Փոխներգործուն մեթոդներ
Հետազոտող՝ Նաիրա Խաչատրյան, ՀԱՊՀ ԳՄ ավագ դպրոց
Ղեկավար՝ Կ. Ալեքսանյան

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3-4

Գլուխ առաջին :Փոխներգործուն մեթոդների դերը հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում----------5-25

- Գլուխ երկրորդ: Նախագծային ուսուցում :----------26-27

Եզրակացություն…… 28

- Գրականության ցանկ…….29

Ներածություն

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ փոխներգործուն մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ

ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում։

Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ։ Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, ուսանողների միջև։ Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը։ Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները։ Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն)։

Գլուխ առաջին :Փոխներգործուն մեթոդների դերը հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում

Հաղորդակցական միջավայրի ստեղծումը կարևոր պայման է երեխաների մտավոր կարողությունների զարգացման համար: Գիտակ ուսուցիչը , եթե ուզում է հասնել հաջող արդյունքի, իր գործունեության մեջ պետք է ընդգրկի ուսուցման փոխներգործուն մեթոդները: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, այս մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն փոխներգործուն մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը , հաղորդակցական կարողությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ այս մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: **Փոխներգործուն կամ ինտերակտիվ** /inter-փոխադարձ, act-ազդել, ներգործել/ նշանակում է փոխազդել, զրուցել կամ երկխոսել

- ուսուցանողի և ուսանողների ընդգրկուն փոխազդեցություն: ուսուցանողի և ուսանողների ընդգրկուն փոխազդեցություն.

- ուսուցանողի դերը նպատակների իրականացումն է՝ սովորողների գործունեությունն ուղղորդելու ճանապարհով.
- ուսուցանողը մշակում է դասի պլանը, ընթացքը, յուրաքանչյուր քայլը, ամեն մի սովորողի կամ սովորողների խմբի անելիքը դասի ընթացքում.
- դասի պլանը վարժությունների ու առաջադրանքների շարք է. դրանց հաջորդական ընթացքը և կատարումն ապահովում են ուսումնական նյութի յուրացումը, ինչպես նաև ստեղծագործական մոտեցումների մշակումը:

Փոխներգործուն կամ ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են. փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի ակտիվությունը, համագործակցությունը, ինքնարտահայտման խրախուսումը, հետադարձ կապը:

Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Այս մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Փոխներգործուն մեթոդների մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Սրանք զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ,կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ: Փոխներգործուն մեթոդների անվանման հիմքը փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում՝ ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս:

Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է, մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ:Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները անվանում են խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ

սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել հաղորդակցական ազատ միջավայր, անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման փոխներգործուն մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ: Փոխներգործուն մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությանը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Այն բնութագրվում է աշակերտների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: բազմազանությունը: Փոխներգործուն մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Այս մեթոդների կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Մեթոդների կիրառումը նաստում է՝

- Ուսումնական դրական խթանի ձևավորմանը,
- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,

- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը,
- Ինքնագործունեության խթանմանը,
- Ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- Աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը

<u>Ուսուցման փոխներգործուն մեթոդները</u>

Աշխատել փոխներգործուն նշանակում է երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Այն ուսուցման տեխնոլոգիա է՝ հիմնված խմբում նրա մասնակիցների փոխազդեցության և ուսուցման խնդիրների լուծման հարցում սովորողների ազդեցության վրա: Այս դեպքում սովորողներն ընդգրկվում են ճանաչողական գործընթացի մեջ, նրանք հնարավորություն ունեն հասկանալ և հետադարձ կապի միջոցով ներկայացնել իրենց հասկացածը: Փոխներգործուն ուսուցումը ենթադրում է երկխոսության միջոցով հաղորդակցման կազմակերպում և զարգացում:

Փոխներգործուն մեթոդներ կիրառող ուսուցիչը հանդես է գալիս միջնորդի, վերահսկողի, կազմակերպողի, ուսուցանողի դերում: Նա պետք է միջնորդ հանդիսանա երեխայի և ուսուցանվող առարկայի կամ նյութի միջև, ուշադիր հետևի երեխային և անհրաժեշտ պահին օգնություն ցույց տա, շտկումներ անի, դասարանում ստեղծի բարենպաստ միջավայր և ուշադիր դիտարկի երեխայի վարքը, գնահատի հոգեկան և ֆիզիկական զարգացումը, հետևի, որ երեխաները իրար չխանգարեն:

Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչները պետք է հիշեն հետևյալ կանոնները.

- Բոլոր սովորողները պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն աշխատանքում:
- Պետք է հաշվի առնել սովորողների հոգեբանական վիճակը:
- Ցանկալի չէ սովորողների մեծաքանակ խումբը:
- Ուշադրություն դարձնել ժամանակին:
- Փոքր խմբերի ճիշտ բաժանում կատարել:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- Փոխազդեցություն,
- սովորողի ակտիվություն,
- խմբային աշխատանք,
- հետադարձ կապ:

ԽՃԱՆԿԱՐ

Այս մեթոդի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, ասպեկտի, հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Խճանկար մեթոդը բաժանվում է հետևյալ փուլերի.

1. Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում- աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում են տեղեկատվություն:
2. Աշխատանք փորձագիտական խմբում- փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են, հարստացնում իրենց նյութերը:
3. Աշխատանք հենակետային խմբում_ յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
4. Ավարտական աշխատանք- աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է ամբողջ թեման:
5. Ամփոփում- արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

Սա <<խճանկար >> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի 2 խումբ: Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը, կազմու մ 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում ՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը , մանրամասն ներկայացնում է աշխատանքը , պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է , երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Սրանից հետո բոլոր հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը: Բարձր դասարաններում նպատակահարմար է խմբերին առաջադրել թեմայի տարբեր մասեր:

ՊՐԻԶՄԱ

Սա շատ ակտիվ մեթոդ է: Խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Այն կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը: Մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկը: Մեթոդի կիրառումն անցնում է շատ արագ և աշխույժ:

Մեթոդն արդյունավետ է այն խամանակ, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Խմբային քննարկումների նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:



ՁՆԱԳՆԴԻ

Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է որևէ պատմություն, առաջադրանքն կամ կոմիքս:

Անհատական աշխատանք- ի՞նչ միտք է ծագում առաջին հերթին: Գրեք ձեր գաղափարների ցանկն այս պատմության վերաբերյալ: Կազմեք զույգեր և իրար ներկայացրեք ձեր անձնական կարծիքները:Ապա միասին ձևակերպեք երկուսիդ համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված են ձեր անհատական կարծիքների ցանկից: Գրեք դրանք թղթի վրա: Կազմեք 4 հոգանոց խմբեր: Ներկայացրեք զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթի վրա: Երկուական 4 հոգանոց խմբերը միանում են, կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները: Նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիք

ամբողջ խմբի համար: Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացրեք դասարանին: Սովորողների հետ տարեք անդրադարձ տալով հետևյալ բնույթի հարցեր.

- ի՞նչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս:
- Ո՞րն էր 2-ով աշխատելու աշխատելու առավելությունըմենակ աշխատելու համեմատ;
- Ո՞ր փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում:
- Արդյո՞ք բոլորը մասնակցեցին քննարկմանը 8 հոգանոց խմբով աշխատելիս:

Միևնույն ժամանակ հետևեք խմբերի դեմ առ դեմ փոխազդեցությանը, և անհրաժեշտության դեպքում աշակերտների ուշադրությունը հրավիրեք դրա վրա՝ հատկապես ութ հոգանոց խմբերում: Աշակերտների համար ակնհայտ է դառնում, որ 8 հոգանոց խմբերով աշխատելն ավելի դժվար է:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Իմաստի ընկալման փուլի համար նախատեսված արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է աշակերտին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

Այս մեթոդի էությունն է, որ կարդալիս արվում է փոխգործուն գրառումներ հետևյալ նշաններով.

V գիտեմ

__ իմ իմացածին հակասում է

+ նոր տեղեկություն է

! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Կարդալու ընթցքում հարկավոր է լուսանցքում տեղադրել այդ նշաններն ըստ նյութի՝ ձեր իմացության և պատկերացման:

Բոլոր տեղերում կարիք չկա նշաններ դնել:

Այս գրառումներեն արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կրդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարման տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

Ընթերցումից ստացված տեղեկությունը դասակարգելու համար աշակերտները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով.

V	—	+	?	!

ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ

Այն կառուցվում է 2 շրջանագծերով, որոնք կենտրոնում ունեն հատման մակերես: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով:



ՈՒսուցիչը նախօրոք թե[illegible] պատրաստում, որոնք սովորաբար երկակի պատասխան են [illegible]ն խնդրում է կրճատ գրել այդ

հարցերի պատասխանները: Հետո աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները:Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

Սա գրավոր վարժություն է, հնարավորություն է տալիս պատկերացնում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ, աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Գրատախտակի մեջտեղում կամ թղթի կենտրոնում գրվում է որևէ առանցքային բառ: Մտագրոհի միջոցով գրվում է այդ բառին առնչվող բառեր և արտահայտություններ: Հետո գծիկով միացվում են այն բառերը, որոնք անմիջական առնչություն ունեն:

Առաջին անգամ կատարելիս պետք է ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամների համար հոգեհարազատ լինի: Այն մեկ անգամ խմբով կատարելուց հետո աշակերտներն այնքան են հմտանում, որ կարողանում են կատարել ինչպես փոքր խմբերով, այնպես էլ՝ անհատապես:

ՀՆԳՅԱԿՆԵՐ

Այն իրենից ներկայացնում է մի բանաստեղծություն, որի ստեղծման համար անհրաժեշտ է համադրել և արտահայտել դիպուկ արտահայտությունները, որոնք պարունակում են ներկայացվող նյութի մասին դատողություն: Հնգյակը ներկայացնելիս անհրաժեշտ է սկզբից ուղեցույց տալ, հետո օրինակով առաջարկել գրել սեփական հնգյակները:

Հնգյակ գրելու ուղեցույցներն են՝ առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը / գոյական/, երկրորդ տողը՝ հասկացությունը նկարագրող 2 բառ՝/ ածական/, 3-րդ տողը՝ երեք բառ, հասկացության հետ կապված գործողություններ /բայեր/, 4-րդ տողը՝ 4 բառից կազմված նախադասություն, 5-րդ տողը՝ առաջին տողին հոմանիշ մեկ բառ: Երբ հնգյակները գրվեն, պետք է զույգերով քննարկել և մի քանիսը

ներկայացնել: Հնգյակները հասկացությունների և ինֆորմացիայի կշռադատման, համադրման շատ արագ, արդյունավետ միջոց են:

Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գարռումները ներկայացնում են միմյանց, ապա ողջ թիմին:Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին:

ԽՈՐԱՆԱՐԴՈՒՄ

Օգնում է հարցը դիտարկել տարբեր տեսանկյուններից; Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ է ունենալ ստվարաթղթից կամ որևէ այլ նյութից պատրաստված խորանարդ, որի նիստերից յուրաքանչյուրի վրա գրված են առաջադրանքի կատարման հետևյալ կողմնորոշիչները՝ նկարագրիր, համեմատիր, վերլուծիր, կիրառիր, թեր և դեմ փաստարկներ բեր:

Սկզբում անհրաժեշտ է ուսումնասիրել առարկան կամ հասկացությունը, ներկայացնել և ձևակերպել առաջադրանքը: Խորանարդումը կարելի է կիրառել խմբային, թիմային քննարկումների ժամանակ, ինչպես նաև աշակերտներին առաջարկել որպես անհատական աշխատանք: Աշխատանքը կարող է կատարվել բանավոր կամ գրավոր: Քննարկելու համար տրվում է 2-4 ր. Ժամանակ: Ապա աշակերտներին ցուցում է տրվում , որ առարկայի կամ հասկացության մասին մտածեն ըստ խորանարդի նիստերին արված նշումների: Երբ խորանարդը նետելով տեսնում ենք <<Նկարագրիր այն>> գրությունը, նշանակում է՝ անհրաժեշտ է ուշադիր ուսումնասիրել և նկարագրել հասկացությունը, խնդիրը կամ առարկան: Քննարկումը կրկնվում է խորանարդի բոլոր վեց նիստերի վրա նշված նշումների համար:

Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտներն իրար են ներկայացնում խորոնարդի նիստերից յուրաքանչյուրի ուղղությամբ իրենց մշակած տարբերակը: Ի վերջո ամբողջ խումբն անդրադառնում է խորանարդի բոլոր նիստերին; Սովորաբար, յուրաքանչյուր զույգից մեկը, որին քաջալերում է գործընկերը, ներկայացնում է իր տարբերակը: Խորանարդումը կիրառելիս ամփոփման ժամանակ հաճախ ակնհայտ է դառնում, որ նիստերի հերթականությունը էական չէ: Կարելի է ըստ անհրաժեշտության

քննարկել խնդիրը միայն մեկ տեսանկյունից : Աշակերտները ոգևորվում են այն բանից, որ ուսուցիչը ևս մասնակցում է և գրի է առնում իր տարբերակները:

ԳՈՒՍ

/ԳԻՏԵՄ,ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ/

Այս մեթոդը ենթադրում է օգտագործել գրաֆիկական կազմակերպիչ, որը 3 սյունակից բաղկացած մի աղյուսակ է և կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը կարդալու ընթացքում:

ԸՆՏՐՎԱԾ ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		
ԳԻՏԵՄ Know	ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ Want to know	ՍՈՎՈՐԵԼ ԵՄ Learned

Աշակերտներին պետք է հարցնել, թե ինչ գիտեն դասի թենայի մասին և իրենց ասածները գրի առնեն աղյուսակի առաջին սյունակի մեջ, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն և դրանք գրանցեն 2-րդ աղյուսակի մեջ:

Պետք է օգնել աշակերտներին՝ դասակարգելու իրենց գիտելիքներն ու հարցերը և կազմել մի առանձին ցուցակ, որին կանվանեն <<Տեղեկատվության ինչ տեսակներից ենք ակնկալում օգտվել>> : Պետք է աշակերտներին առաջարկել կարդալ պատմությունը կամ ընտրված հատվածը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են իրենց նախնական հարցերին կամ լրացնում են դրանք՝ ընդլայնելով թեմայի մասին պատկերացումները: Իսկ երբ աշակերտները վերջացնեն կարդալը, պետք է նրանց ուշադրությունը հրավիրել 3-րդ սյունակի վրա: Պետք է թվարկեն թեմային վերաբերող նոր տեղեկությունները, որոնք հայտնաբերել են կարդալու ընթացքում և գրի առնեն 3-րդ սյունակում: Երբ լրացվում է ԳՈՒՍ- ի աղյուսակը, ամփոփել ամբողջ դասարանի կամ առանձին աշակերտների կողմից դասակարգված ողջ տեղեկատվությունը:

ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ԼՍԵԼ ԵՎ ԱՇԽԱՏԵԼ

Սրա նպատակն է լսել, խոսել, ներդրում կատարել և այլն սոցիալական հմտություններ ձեռք բերել:

Կազմել 4 հոգանոց խմբեր, տալ քննարկելու կամ աշխատելու թեմա: Մինչև սկսելը յուրաքանչյուր խմբին տալ 12 լուցկու հատիկ: Նրանք բաժանում են հատիկները խմբի անդամների միջև հավասարապես : Մեկ հատիկը նշանակում է խմբում խոսել 1 անգամ: Յուրաքանչյուրը խոսելուց հետո իր հատիկը դնում է խմբի կենտրոնում. Դա իրենց ներդրումն է խմբի աշխատանքին; Վերջում կատարվում է հետևյալ անդրադարձը . արդյո՞ք խմբում միշտ լսում ենք ուրիշներին, արդյո՞ք հնարավորություն ենք տալիս արտահայտվելու քչախոսներին, ինչպե՞ս մենք կապակցեցինք մեր ելույթները, ինչպե՞ս է այս վարժությունը բարելավելու համագործակցությանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆԻՎ

Սրա նպատակը խմբի աշխատանքի գնահատումն է :

Աշակերտները պետք է իրենց խմբի աշխատանքի համար որոշեն գնահատման չափանիշներ: Դրանց թիվը կարող է տարբեր լինել, սակայն չպետք է գերազանցեն 10-ը: Գրատախտակին պետք է գրանցվեն բոլոր չափանիշները՝ բացառելով կրկնությունները: Չափանիշները համարակալվում են: Յուրաքանչյուր խումբ գծանկարում է 1 անիվ՝ անվաճաղերի այնքան թիվ, որքան որ չափանիշներ են ընտրվել: Դրսի կողմից անցաճաղերի վրա պետք է գրվեն չափանիշների համարները: Անվաճաղերը ներկայացնում են մի սանդղակ, որի կենտրոնում ամենացածրը 0 կետն է , իսկ շրջանագծի վրա ամենաբարձրը՝ 10 միավոր նշանակող կետը: Անհատները պետք է գնահատեն խմբի աշխատանքը՝ ըստ զանազան չափանիշների և յուրաքանչյուր չափանիշի հատկացնեն միավորներ՝ անվաճաղի վրա նշում կատարելով:

Երբ պետք է իմանալ դասարանի գնահատականը, ապա գնահատումը կարելի է կատարել նույն անիվի վրա: Այս դեպքում յուրաքանչյուր աշակերտ անվաճաղի վրա իր նիշն է դնում: Այս վարժությունը, դասընթացը, ուսուցչին, խմբի աշխատանքը և այլն գնահատելու արդյունավետ միջոց է :



ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ /ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Սա մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է : Օգնում է գիտակցված ձևով սովորել, ընդունել նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնել, թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում:

Հասկացությունների քարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր, առանցքային, հիմնական միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով:Այնուհետև կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մքից ճառագայթող ճյուղերին: Բոլոր բառերը, արտահայտությունները գծերով միացնել կենտրոնին կամ ճյուղերին՝ ըստ դրանց՝ միմյանցից կախված լինելու հնագամանքի:

Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտքերի տարափի մի տարատեսակ: Իրականում դրանք երկուսն էլ նպատում են նոր նյութի տարբեր մեկնաբանությունների և տեսակետների կուտակմանը: Սակայն տարբերվում են միմյանցից : Այս դեպքում պատահական մտքեր ավելի քիչ են լինում, քան մտքերի տարափի ժամանակ: Այն իր կառուցվածքով զարկ է տալիս գաղափարների ներդաշնակեցմանն ու գաղափարների կերտմանը:

Տ-ԱՁԵՎ ԱՂՅՈՒՍԱԿ

Սա ճկուն միջոցներից է, միևնույն հասկացության, խնդրի 2 կողմերը համեմատելու համար: Այս աղյուսակը կազմված է երկու բաժիններից, ուր գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակառակ որակները, դրական կամ բացասական կողմերը, բերված են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Այս աղյուսակը կարելի է արդյունավետ օգտագործել դասի տարբեր փուլերում:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Իրավիճակների վերլուծության մեթոդ

Իրավիճակների վերլուծության մեթոդի ժամանակ ներկայացվում է իրական կամ մտացածին իրավիճակ, որոնց շուրջ այնուհետև աշխատում ենք: Ուսուցիչը ընթերցում է կամ ֆիլմի տեսքով ներկայացնում է ընտրած թեման կամ ստեղծագործությունը, որի շուրջ սկսում է կատարվել քննարկումներ և վերլուծություն: Իրավիճակը պետք է համապատասխանեցվի սովորողների տարիքային առանձնահատկություններին և առնչվի նրանց առօրիայի հետ: Այս մեթոդի կիրառում է, նույնպես կարելի է կիրառել որպես տեսական մասին լրացում: Այս մեթոդը կիրառվում է փոքր կամ ենթախմբերի բաժանված մեծ խմբերում: Վերլուծական ընդունակությունների զարգացման համար խիստ օգտակար է որոշում կայացնելու, խնդիրներ լուծելու, բանակցելու վերաբերյալ իրավիճակների առաջադրում:

ԱՊԱԳԱՅԻ ԱՆԻՎ

Ուսուցիչը գրատախտակի կենտրոնում գրում է որևէ հրատապ խնդիր, ապա աշակերտներին հնաձնարարում է մտագրոհի օգնությամբ թվարկել այդ խնդրի առաջացման պատճառները և գրել տրված բառի ներքևի մասում: Դրանք էլ իրենց հերթին կարող են բաղդատվել: Բառի վերևում գրվում են աշակերտների թվարկած հետևանքները խնդրի վերաբերյալ: Ամփոփելով, կարելի է հանձնարարել գրել փոքրիկ շարադրություն թեմայի վերաբերյալ:



ՔԱՌԱԲԱԺԱՆ

Հարմար է կիրառել ցանկացած տեքստի հետ աշխատելիս, մեծ և փոքր խմբերով աշխատելիս կամ անհատական աշխատելիս: Անհրաժեշտ է մաքուր թուղթ կամ գրատախտակ, որը պետք է բաժանել 4 մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է , քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում:

Ի՞նչ էիք տեսնում տեքսը կարդալիս	**Ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս**
Կապը ձեր կյանքի հետ	**Նոր վերնագիր**

ԴԵՐԱՅԻ ԽԱՂ

Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջարկվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Անհրաժեշտ է բավարար ժամանակ տրամադրել դերային խաղում ներգրավված դերերը նկարագրելու համար և համոզվել, որ խաղի համար ստեղծված պայմանները առավելագույնս համապատասխանում են մասնակիցների հիմնական գործունեությանը:

Դերային խաղի հրահանգներում պետք է մանրամասն նկարագրվեն իրավիճակի բոլոր կողմերը: Հրահանգը պետք է խիստ սահմանափակումներ չունենա, որպեսզի չխանգարի մասնակիցներին այդ դերը խաղալ իրենց պատկերացումներին համապատասխան: Դերային խաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք ունենալ կամ ազատ լինել:

Դերային խաղի կիրառման ընթացքում խումբը պետք է հետևի այդ խաղի ընթացքին: Չմասնակցողը կարող է դիտորդի դեր կատարել: Դերային խաղի ավարտը որոշում է ուսուցիչը:

Մեթոդն օգտակար է , երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ, տարբեր կարծիքներ ունեն: Ցանկալի է ընտրել հետաքրքրիր և տարբեր տեսակետներ պարունակող թեմաներ, հետևաբար, դրան մասնակցողները պետք է ներկայացնեն տարբեր տեսակետներ:

Դերային բաժանման համար կարելի է կիրառել հետևյալ քայլերը՝ պատահական բաշխում, սկզբում բաժնել գլխավոր դերերը, իսկ մնացածը՝ ըստ ցանկության:

Ուղեղային (մտային) գրոհ կամ մտքերի տարափ (բրեյնստորմինգ)

Մտքերի տարափ *անվանում, քանի որ հաճախ խրախուսվում է պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:*

Մտքերի տարափը անցկացնելու հետևյալ վեց կանոն կա.

1. Ցանկացած քննադատության բացակայություն
2. Գաղափարների խրախուսում
3. Մասնակիցների հավասարություն
4. Զուգորդումներ
5. Բոլորի մտքերի գրառում
6. Վերջնական վերլուծության ժամանակը

Ուղեղային գրոհը գաղափարների վերարտադրման մեթոդ է: Մասնակիցները արտահայտելով ծագած սեփական գաղափարները և դրանց լուծումը, փորձում են լուծել հիմնախնդիրը: Ուղեղային գրոհի մեթոդը իրականացնում է ուսուցման գործընթացի բոլոր գործառնությունները, բայց հիմնական գործառնությունը ուսումնառողների կողմից ինքնուրույն ըմբռնելու և հիմնահարցի լուծման մոտիվացիան է: Ուղեղային գրոհը բարդ մեթոդ է և տարածում չունի, վերաբերում է խաղային մեթոդներին: Տալիս է դրական արդյունք վիճելի հարցերի, վարկածների, պրոբլեմահարույց իրավիճակների քննարկման ընթացքում: Մեթոդի կիրառման տեխնոլոգիան հետևյալն է: Ակադեմիական խումբը բաժանվում է երկու ենթախմբերի՝ ‘գաղափարների գեներատոր’ և ‘գաղափարների քննադատություն’: Առանձնացվում է

ևս երեք մարդ՝ որպես էքսպերտ-վերլուծողներ: Մեթոդը իրականացվում է չորս փուլով.

գ առաջին՝ նախապատրաստական: Դասախոսը ներկայացնում է խաղին մասնակցելու կանոնները, նպատակը, բովանդակությունը, բնույթը;

գ երկրորդ՝ ՝գաղափարների գեներատոր՝ առաջադրված խնդրի լուծման հետ կապված արագ և հստակ արտահայտում են բոլոր առաջարկները, ստեղծում ՝գաղափարների բանկ՝;

գ երրորդ՝ ՝գաղափարների քննադատությունը՝ ՝գրոհում է՝. ընտրում են առավել արժեքային, առաջատար գաղափարներն ու առաջարկները, վերլուծում, գնահատում, քննադատում դրանք և ներառում արդիական առաջարկությունների ցանկ՝ ապահովելով խնդիրների լուծումները:

գ չորրորդ՝ փորձագետները վերլուծում և գնահատում են երկու ենթախմբերի գործունեությունը, առաջադրված գաղափարների նշանակությունը:

՝Գաղափաների գեներատորի՝ և ՝գաղափարների քննադատության՝ աշխատանքի ժամանակը որոշում է դասախոսը: Մեթոդը նպաստում է ուսանողների վերլուծողական և ստեղծագործական ունակությունների ձևավորմանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերի տարափը հեշտ կիրառելի մեթոդ է այն չի պահանջում երկարատև նախապատրաստում: Մտքերի տարափը օգտակար է ստեղծագործական մտածողության զարգացման համար, զարգացնում է լսելու կարողությունը և հաղորդակցվելու կարողությունը, ինչպես նաև նպաստում է համագործակցությանը:

Գործնական և դերային խաղեր /խաղային մեթոդ/:

Այս մեթոդի վերաբերյալ դասախոսները և գիտնականները չունեն միասնական կարծիք չնայած բավականաչափ գրականության առկայությանը: Մի մասը մանկավարժական խաղը համարում է ուսումնական աշխատանքի ձև, մյուսը՝ մեթոդ: Մենք հարում ենք երկրորդ մոտեցմանը և գտնում, որ մանկավարժական խաղը դա ինտեգրատիվ մեթոդ է, բուհի կամ այլ ուսումնական հաստատության կյանքում իրական մանկավարժական իրավիճակներում ծառացած մանկավարժական

խնդիրների լուծման նմանակում: Խաղի հաջողությունը պայմանավորված է ուսանողի տեսական պատրաստվածությամբ, մասնագիտական հմտությունների տիրապետմամբ, ստեղծագործական մտածողության և ռեֆլեքսիայի զարգացմամբ: Իր հերթին, խաղի արդյունավետ անցկացումը նպաստում է մանկավարժական հմտությունների և որակների, գիտելիքների ֆոնդի, կրեատիվության, ռեֆլեկսիայի հետագա զարգացմանը: Այս մեթոդի կիրառմամբ պարապմունքները, որպես կանոն, կրում են ակտիվ և հետաքրքրաշարժ բնույթ: Այսպիսի եզրակացության կարելի է հանգել անցկացնելով մանկավարժական խաղեր հետևյալ թեմաներով՝ ‘Համալսարանական խորհրդի նիստ’, ‘Մանկավարժական պրակտիկան դպրոցում’, ‘Դիդակտիկական մեթոդների իմ համակարգը’ և այլն: Սակայն տեղին չէ այս մեթոդի չարաշահումը և Վ.Ա.Սուխումլինսկու խոսքերով. ‘ուսումն աշխատանք է, և չի կարելի այն վերածել խաղի’: Կարևոր է նաև հաշվի առնել, որ խաղային մեթոդների կիրառմամբ թեմաների յուրացումը պահանջում է երկար ժամանակ: Գործնական և դերային (իրավիճակային) խաղերը պրոբլեմային հանձնարարությունների տեսակներից են: Միայն այս դեպքում նյութի (հաճախ նաև տեքստային) փոխարեն օգտագործվում է ռեալ իրավիճակների բեմադրումը, որտեղ դերերը կատարում են ուսումնառողները: Գործնական և դերային (իրավիճակային) խաղերը որպես մեթոդ իրականացնում են հետևյալ գործառնությունները.

- ուսուցանող. ուսումնառողների կարողությունների ձևավորում, ստեղծագործական ունակությունների զարգացում, այդ թվում՝ նոր իրավիճակները հասկանալու, վերլուծելու և ձևակերպելու,
- զարգացնող. խոսքի, տրամաբանական մտածողության, միջավայրին և պայմաններին հարմարվելու ունակությունների զարգացում,
- մոտիվացիոն. ուսումնառողների ուսումնական գործունեության դրդապատճառների արթնացում, ինքնուրույն որոշումների ընդունման խթանում,
- դաստիարակող. պատասխանատվության, հաղորդակցության, պրակտիկ գործունեության հակվածության ձևավորում: Գործնական և դերային

(իրավիճակային) խաղերի իրականացումը պարապմունքների դաս-դասարանային ձևով կատարվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- դիդակտիկ նպատակը ուսումնառողների առջև դրվում է խնդրի ձևով,
- ուսումնական գործունեությունը ենթարկվում է խաղի կանոնների,
- ուսումնական նյութը օգտագործվում է որպես խաղի միջոց,
- ուսումնական գործունեության մեջ է մտցվում մրցակցության տարրեր, և դիդակտիկ խնդիրը վերաճում է խաղային գործունեության,
- դիդակտիկ հանձնարարության հաջողությամբ կատարումը կապվում է խաղի արդյունքների հետ:

Իսկ ինչո՞վ է տարբերվում գործնական խաղը դերային խաղից:

Գործնական խաղի մասնակիցներին առաջարկվում է ռեալ կենսական իրավիճակների վրա հիմնված խաղային սյուժե, որի համաձայն մասնակիցների առջև դրվում է գործունեության ընդհանուր նպատակ՝ լուծել առաջարկված խնդիրը: Միաժամանակ, յուրաքանչյուր մասնակից պետք է իրականացնի անհատական դերային նպատակ: Այդ պատճառով էլ լուծման մշակման գործընթացը կրում է անհատական-խմբային բնույթ՝ յուրաքանչյուր մասնակից սկզբում որոշում է ընդունում սեփական անհատական դերային նպատակին համապատասխան, իսկ այնուհետև, դա համաձայնեցնում է խմբի հետ: Դա կապված է անհատական դերային նպատակի կատարումը ամբողջ խմբի լուծման արդյունքներից կախված լինելու հետ: Որպես կանոն, հիմախնդրի լուծումը գործնական խաղի ընթացքում տեղի է ունենում մի քանի ցիկլերով (մեկ խաղի ընթացքում 2-ից 10 և ավելի):

Մասնակիցների գործունեության գնահատումը իրականացվում է ինչպես խաղի ընթացքում, այնպես էլ խաղի ավարտին.

- ընթացիկ գնահատումը թույլ է տալիս դրված նպատակների իրականացնելը ավելի խորը գիտակցելու նպատակով խաղի ընթացքում ազդել մասնակիցների գործունեության վրա,

- վերջնական արդյունքի գնահատման ժամանակ հաշվի է առնվում մասնակիցների կազմակերպական գործունեությունը և նրանց կողմից խաղային դերային նպատակի իրականացումը:

Դերային խաղը, ինչպես և գործնականը, հիմնվում է իրավիճակում առկա հիմնախնդրի լուծման ժամանակ մասնակիցների ակտիվ փոխազդեցության վրա: Թեմայի շրջանակներում մասնակիցներն ունեն մեկ պարտադիր նպատակ. լուծել հիմնախնդիրը: Բայց անհատական նպատակներն արդեն չեն համաձայնեցվում, ինչպես գործնական խաղերի ժամանակ: Առանձին մասնակիցների նպատակները դերային խաղերում՝ իրենց ցույց տալն է, հաղթելը: Իրավիճակային խաղերի արդյունքների գնահատումը իրականացվում է ոչ միայն ընդհանուր նպատակին հասնելու համար, այլև առանձին մասնակիցների դերային նպատակների իրականացման համար: Մշակված խաղերը պետք է առավելագույնս նմանեցված լինեն իրական կյանքին, բայց մասնակիցների համար ոչ չափազանց բարդ և դժվար: Լսարանային միջավայրի առավելագույն համապատասխանեցումը իրական ռեալ պայմաններին, օրինակ՝ յուրաքանչյուր մասնակցին ապահովելով անհատական աշխատատեղով՝ գրասենյակով, անկասկած, խաղը ուսումնական գործընթացը կդարձնի առավել արդյունավետ:

Բանավեճ

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է: Բանավեճի մեթոդը իրականացնում է ուսուցման գործընթացի բոլոր գործառնությունները: Բանավեճը որպես մեթոդ, մեկ հարցով կամ թեմայով սահմանափակված լինելու առանձնահատկություն ունի և կառուցվում է որոշակի կարգով: Եվ քանի որ շատ կարևոր է,որ յուրաքանչյուրն ունենա իր տեսակետն ու հայացքները բայց և հարգի մյուսի տեսակետները,բացառվում է ուրիշի խոսքն ընդհատելը: Որպեսզի բանավեճն արդյունավետ լինի, մասնակիցները պետք է ունենան որոշակի նախնական գիտելիքներ: Սրանք կարող են լինել գիտելիքներ,որ տվել են դասխոսությամբ կամ որևէ այլ կերպ,բայց կարևոր է,որ բոլորը դրանք ունենան:Հետո այդ թեմաներից որևէ հարցի շուրջ

կազմակերպվում է բանավեճ:Քանի որ բանավեճը,ի տարբերություն սովորական զրույցի,պետք է համակարգված լինի,այս մեթոդը կիրառելիս կառնոր է նախապատրաստել,թէ բանավեճն ինչ ուղղությամբ է զարգանալու: Ժամանակային սահմանները պետք է քննարկվեն նախապես:Իդեալական տարբերակում այդ սահմանները պետք է տեմպ և աշխուժություն հաղորդեն բանավեճին:Անհնար է սկզբից պլանավորել բանավեճի բոլոր ասպեկտները,բայց կարելի է մոտավոր պլան կազմել: Կարևոր է.

- ներկայացնել թեման և դրա հետ առնչվող մառդկանց,
- որոշել բանավեճի սահմանները,հստակեցնել,թե որ ոլորտներն են ընդգրկված լինելու ,որոնք ոչ,
- հստակեցնել բանավեճի նպատակը,
- հաղորդել այն ողջ ինֆորմացիան,որը կօգնի ներառել բանավեճն ընդհանուր դասընթացի շրջանակներում,պատրաստել այն առանցքային հարցերը,որոնք կապահովեն բանավեճի վերահսկողությունը,կպահպանեն նրա ուղղվածությունը և ինչու չէ կխթանեն:

Այս մեթոդը օգտագործվում է, երբ նպատակ է դրվում.

- ձևավորել նոր գիտելիքներ,
- ուսումնառողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին լուրջ խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան,
- ուսումնառողներին սովորեցնել՝ հասկանալ փաստարկների և դրանց վրա հիմնված եզրահանգումների միջև տարբերությունները,
- ձևավորել հաղորդակցական հմտություններ,
- ուսումնառողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու հարցում:

Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավորվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ: Եթե դասավանդողը որոշում է ընդունել անցկացնել ազատ բանավեճ, ապա այն պետք է սկսի չմասնակցելով քննարկման ընթացքին, հանդես գա դատավորի դերում: Այստեղ կարևոր է շեշտադրել քննարկման

գործընթացը և խթանել յուրաքանչյուր ուսումնառողի սեփական փաստարկների ձևակերպումը: Այդ պատճառով էլ, երբ պետք է ազդել յուրաքանչյուր ուսումնառողի վրա, ազդել դիրքորոշման և անձի վրա, անց է կացվում ազատ բանավեճ: Եթե դասավանդողը որոշել է անցկացնել ղեկավարվող բանավեճ, ապա ուսումնական խնդիրների էությունը արտացոլող եզրակացությունների հանգելու համար այն պետք է նախապես պլանավորի: Անհրաժեշտ է, որ բանավեճի ժամանակ քննարկվող հարցերը առնչվեն միայն յուրացման ենթակա նյութին:

Բանավեճի արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից.

- Նախ և առաջ այն կախված է ուսումնառողների պատրաստվածության աստիճանից: Առանց մտքերը արտահայտելու կարողության բանավեճի մասնակիցներին որևէ հարցում համոզելը հակասական է և խճճող: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է հոգ տանել ուսումնառողների մոտ մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու, հարցերը միանշանակ և հստակ ձևակերպելու, կոնկրետ ապացույցներ բերելու և այլ կարողությունների զարգացման ուղղությամբ:
- Բանավեճը նպատակահարմար է անցկացնել միայն այն դեպքում, երբ լսարանում առողջ մթնոլորտ է, երբ ուսումնառողները համերաշխ են, հակառակ դեպքում այն կարող է վերածվել վեճերի:
- Բանավեճը հաջողություն կունենա միայն այն դեպքում, երբ թեման հարմար է կարծիքների փոխանակման համար և ուսումնառողները տիրապետում են տվյալ թեմայի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների պաշարին:

Այս մեթոդը կարելի է կիրառել երեք տարբերակով.

1. Բանավեճի հիմնախնդրի հետ կապած՝ դասախոսը նախապես մշակում է հարցերը, որպեսզի ուսանողները նախօրոք ընկալեն, հասկանան դրանք և պատրաստվել պարապմունքին,
2. Ուսանողներին նախապես հաղորդվում է միայն քննարկման հիմնախնդիրը, իսկ պարապմունքի սկզբում նրանք դասախոսի հետ միասին կազմում են հարցերը, որոնց հիման վրա ընթանում է բանավեճը,

3. Սեմինարների, գործնական և լաբորատոր պարապմունքների, դասախոսությունների ժամանակ ծագում են հարցեր, որոնք դառնում են ինքնաբերաբար առաջացած բանավեճի առարկա:

Բանավեճը լավագույնս ընթանում է բարյացակամ,անկաշկանդ մթնոլորտում: Կարևոր է,որ բոլոր մասնակիցները կարողանան իրար տեսնել: Բանավեճի արդյունավետության համար մասնակիցների թիվը չպետք է մեծ լինի, քանի որ երբ մասնակիցները շատ են, դժվար է անկաշկանդ մթնոլորտ պահպանել: Բանավեճ վարողի դերն ավելի մոտ է միջնորդի դերին: Նա պետք է զգուշորեն, բաց հարցերի միջոցով խումբն ուղղորդի բանավեճի: Երբ սկսվում է տեսակետների փոխանակումը, վարողը պետք է համոզվի, որ ոչ ոք չի գերիշխում: Եթե մասնակիցների կողմից բերվող փաստարկները դառնում են ոչ հստակ կամ կասկածելի,վարողը պետք է խմբի անունից խնդրի հստակեցնել դրանք: Ուսուցիչը պետք է հետևի,որ մասնակիցները չշեղվեն թեմայից: Բանավեճի համար հատկացված ժամանակում ուսուցիչը կամ վարողը պետք է ընդհանրացնի,ամփոփի խմբի կողմից արտահայտած մտքերը և եզրակացությունները: Բանավեճի ընթացքում նկատելի է,թե որքանով է խումբը հասկանում քննարկվող հարցերը: Բանավեճի խմբի ներգրավվածության բարձր մակարդակ է ենթադրում: Բանավեճի կիրառման վմտանգներից վտանգներից մեկը թեմայից շեղվելու հավանականությունն է: Բանավեճի որակը զգալիորեն կախված է խմբի մասնակիցների գիտելիքներից և փորձից: Ցանկալի է բանավեճը կիրառել այն խմբերում,որոնց մասնակիցների գիտելիքների մակարդակը միմյանցից շատ չի տարբերվում,այդ կերպ կարելի է տեսակետների,սկզբունքների և մոտեցումների լայն շրջանակ ապահովել: Բանավեճն անկասկած երևույթները նոր տեսանկյունից դիտարկելու հնարավորություն է տալիս: Բանավեճը կիրառվում է այն դեպքերում երբ գիտելիքների տեսակետների և համոզմունքների փոխանակումը կարող է օգնել շրջաատող միջավայրի,մարդկանց հայացքների փոփոխությանը:

Գլուխ երկրորդ: Նախագծային մեթոդ

Նպաստում է սովորել սովորելուն,ուղղորդում է իմացական գործընթացը,խթանում է հետազոտական աշխատանքը,ստեղծագործական միտքը:Նախագծային մեթոդը մանկավարժական մոտեցում է՝ուղղված գիտելիքների կիրառմանը և նորերի ձեռք բերմանը:Սովորողի ակտիվ մասնակցությունը այս կամ այն նաղագծի ստեղծմանը հնարավորություն է տալիս յուրացնել մարդկային գործունեության նոր ձևեր:Հետազոտական նախագիծը ըստ բովանդակության կարող է կիրառվել մեկ կենկրետ առարկայի սահմաններում:Նախագիծը կարող է լինել ամփոփիչ,երբ նրա կատարման արդյունքների հիման վրա գնահատվում է որոշակի ուսումնական նյութի սովորողների յուրացման մակարդակը, և ընթացիկ, երբ ինքնակրտության և

նախագծային գործունեության համար առանձնացվում է ուսումնական նյութի մի մասը միայն:Հետազոտական նախագծի ուսումնական պրոցեսում ներառելը կազմակերպական առումով դժվար է:ՈՒսուցիչը ուսումնական տարին լանավորելուց պետք է առանձնացնի գլխավոր թեմաները որոնք պոտք է ուսուցանվեն նախագծի մեթոդով:Սովորողը պետք է հնարավորություն ունենա ընտրել նախագծի թեման, նրա իրականացման ձևը:Արդյունավետ է ոչ ծավալի մեթոդական հանձնարարականների կիրառումը:Նախագծի իրականացման ընթացքում ցանկալի է, որ ուսուցիչը լինի անկախ խորհրդատուի դերում:Սովորողների մոտ նախագիծ իրականացնելը դժվարություններ է առաջացնում,այդ դժվարուտյունները օբյեկտիվ բնույթ ունեն և դրանց հաղթահարումն էլ նախագծի մեթոդի առաջնային մանկավարժական նպատակն է հանդիսանում : Նախագծի իրականացման, ծրագրավորման հիմքում ընկած է նոր ինֆորմացիայի յուրացումը անոչոշ իրավիրճակում: Այս մեթոդը թույլ է տալիս ձևավորել այնպիսի որակներ, որոնք բացատրության միջոցով հնարավոր չէ զարգացնել , անհրաժեշտ է ներգրավվածությունը գործունեության մեջ:Սովորողները դառնում են պրոցոսին ակտիվ մասնակիցներ,նրանց մոտ զարգանում է ինֆորմացիան վերլուծելու կարողությունը:Նախագծի կատարման ընթացքում սովորողները հայտնվում են անորոշ վիճակում,բայց դա ակտիվացնում է նրանց իմացական աշխատանքը:Սովորողները ձեռք են բերում ինտելեկտուալ գործունեության սեփական փորձ:

Աշխատանք փոքր խմբերով

Խմբային աշխատանքի ձևը վաղուց մտել է ուսումնական ոլորտ:Համաշխարհային դպրոցում կիրառվում է ուսուցման կազմակերպման երեք ձև՝ անհատական,խմբային,դաս դասարանային:Ներկայումս կարևորում է փոքր,համագործակցային խմբերով ուսուցումը:Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման ձև է,որը սովորողներին հնարավորություն թ տալիս դասընկերների հետ փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը,համատեղ լուծել խնդիրներ:Արդյունավետ խմբային աշխատանքի համար մարդկանց մեկ խմբում հավաքելը բավարար չէ: Դպրոցում հանդիպում են խմբերի տարբեր տիպեր օր.դասարանը,գործնական աշխատանք կատարող աշակերտների խմբեր և այլ: Այս խմբերը միշտ չէ, որ համագործակցում է:

Մասնագետներն առաջարկում են խմբերի դասակարգում ելնելով ուսման արդյունավետությունից: Ուսանողների խմբավորումները,որոնցից պահանջվում է միասին աշխատել,սակայն նրանք դրա համար շարժառիթ չունեն կոչվում են կեղծ խմբեր: Ավանդական խմբերը կազմվում են աշակերտներից որոնց հանձնարարվել է միասին աշխատել բայց դրա համար անհրաժեշտություն չկա: Արդյունավետ խմբերի անդամները ոչ միայն միասին ախատելու հանձնարարեություն են ստանում ,այլև զգում են դրա անհրաժեշտությունը: Նրանք գիտակցաբար և ակտիվ համագործակցության մեջ են մտնում, քանի որ ունեն ընդհանուր նպատակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա,

որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը –մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:



Այսպիսով, ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- ՈՒսումնական դրական խթանի ձևավորում,
- ՈՒսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում,
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,

- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- ՈՒսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Գրականության ցանկ

Ազատ Վիկիպեդիա